



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

20694

1908 - 1909

373

z-29

u.p.



373  
2-29

# ՅԱՅՏԱԳԻՐ

ՍԱՆԱՍԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Ի ԿԱՐԻՆ

1908-1909



370  
2203-34

2010

22002

*[Handwritten signature]*



8321

3-29  
370  
2203-30

ՍԱՆՍՍՍԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Շրջան ԻԲ.

Յայտագիր 1908-1909 Վարժարանական տարուան

1004  
1559

Վարժարանս ունի երկու բաժին.— Ա. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՒ Բ. ԱՐՀԵՍՏԱ-  
ԳԻՏԱԿԱՆ :

Ա.— ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆԸ իր ծրագրով կը համապատասխանէ Գերմանա-  
կան միջնակարգ վարժարաններուն, եւ ունի մեկ նախապատրաստական եւ վեց վար-  
ժարանական դասարան՝ իւրաքանչիւր մեկ տարուան ընթացքով :

Ուսանց առարկաներն են .—

- 1<sup>0</sup>. ԿՐԾՆ. 2<sup>0</sup>. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ. 3<sup>0</sup>. ՀԱՅԵՐԷՆ ( Աշխարհաբար  
ԵՒ Գրաբար ). 4<sup>0</sup>. ՕՍՄԱՆԵՐԷՆ. 5<sup>0</sup>. ՖՐԱՆՍԵՐԷՆ ԵՒ ՖՐԱՆՍԵՐԷՆԷ ՕՍՄԱՆԵՐԷՆ  
ՓՈՒՍԳԱՐՁ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ. 6<sup>0</sup>. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ( Տոմար Թաւ. եւ Ընդհ. ) 7<sup>0</sup>. ԱՇ-  
ԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ ( բնական, քաղաքական, առեւտրական եւ ուսումնական ). 8<sup>0</sup>.  
ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՔ ( Բնապատմութիւն, Բուսաբանութիւն, Կենդանաբանութիւն,  
Մարդակազմութիւն եւ Առողջապահութիւն, Հանքաբանութիւն եւ Երկրաբանութիւն ,  
Տարրաբանութիւն եւ Բնաբանութիւն ). 9<sup>0</sup>. ՕՍՄ. ՕՐԷՆՍԳԻՏՈՒԹԻՒՆ. 10<sup>0</sup>. ՈՒՍՈ-  
ՂՈՒԹԻՒՆ ( Թուաբանութիւն, Գրահաշիւ, Երկրաչափութիւն, Եռանկիւնաչափութիւն  
Եւ Տոմարակալութիւն ). 11<sup>0</sup>. ԳԻՒՂԱՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ ԵՒ ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ՃԱՐՏԱ-



ԲԱՐՈՒՅՍՏՔ ( Շերամաբուծութիւն, Մեղուաբուծութիւն, Կարագաշինութիւն, Եւլն . [ Տեսական եւ Գործնական ] ). 12<sup>0</sup>. ԳԾԱԳՐՈՒԹԻՒՆ. 13<sup>0</sup>. ԳԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ. 14<sup>0</sup>. ԶԵՆԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՔ ( Travaux manuels ). 15<sup>0</sup>. ԵՐԳ. 16<sup>0</sup>. ՄԱՐՄՆԱՄԱՐԶ. 17<sup>0</sup>. ԴԱՇՆԱԿ ( Կամաւոր ). 18<sup>0</sup>. ԶՈՒԹԱԿ ( Կամաւոր ). 19<sup>0</sup>. ՆՈՒԱԳԱՆՈՒՄԲ ( Fanfare ):

Տարին երեք անգամ գրաւոր քննութիւններէ յետոյ, ուսմանց եւ վարուց վիճակացոյցներ կը դրկուին ծնողաց:

Ընթացաւարսը կը ստանայ Դպրութեանց եւ Գիտութեանց Վկայական (Diplôme de Baccalauréat ès-Lettres et ès-Sciences):

Վարժարանիս քննարկաւարսներն յաջողութեամբ կը մտնեն Եւրոպական համալսարանները:



Թուակաւոր գիւղերով եւ ցերեկեայ աշակերտներու ընդունելութեան պայմաններն են .—

1<sup>0</sup>. Աշակերտ մը որպէս զի կարենայ ընդունուիլ Պատրաստական Դասարանին մէջ, պէժ է որ .—

- ա.) Ըլլայ 10-12 տարեկան ուշիմ եւ առողջ:
- բ.) Ունենայ հետեւեալ ծանօթութիւնները .— Հայերէն վարժ կարդալ, ընթերցելի կերպով գրել, Քերականութեան “Մասունքանի”, գիտնալ, Թելադրութիւն մը գրի առնել՝ առանց ուղղագրական խռոտ սխալներու, եւ Թուաբանական չորս գործողութիւններ վարժ կերպով կատարել 1 — 1000 թիւերով:

ԾԱՆՈԹ.— Վերի դասարաններէն ո՛ր եւ է մեկին մէջ ընդունուիլ ուզող աշակերտը պարտաւոր է քննութիւն տալ Վարժարանիս Ուսուցչական Մարմնոյն առջեւ, ըստ Ծրագրին:

2<sup>0</sup>. Թուակաւոր գիւղերով աշակերտաց համար պէժ է վճարել Մուսֆի տուրք ( միանուագ՝ մաննակալի, անկողնոյ, Եւլն. ի համար . . . . . 3 — Լիրա Օսմ. Տարեբուսակ . . . . . 16 — « «

Ի փոխարէն, Վարժարանս անոնց կուտայ ուսում, սնունդ, հագուստ, անկողնոյ կազմած, դասագիրք, ուսումնական պիտոյք, դեղ եւլն.: Մաքրութեան եւ Բժրեկութեան ծախսերն եւս վարժարանիս վրայ են:

Ծնողաց դիւրութիւն մը տալու համար, որոշուած է վերոյիշեալ 16 Լիրա տարեբուսակին կէտը գանձել Սեպտ. 1 ին, իսկ միւս կէտը Փետր. 1 ին, պայմանաւ սա-

կայն որ ծնողք քաղաքիս մէջ ցոյց տան պատուաւոր երաշխաւոր մը, ի հարկին, վճարելու համար բուսակին մնացորդը, եւ կամ Ազգ. Առաջնորդարաններու միջոցաւ հարկ եղած ապահովութիւնը տան այդ մասին:

ԾԱՆՈԹ.— Ակներեւ է թէ տարեբուսակին տոյն գումարը չի բաւեր հոգալու աշակերտին բոլոր վերոյիշեալ ծախսերը, բայց այդ պակասը կը լրացուի Հիմնադիր Բարեբարին կտակած եկամուտներովը:

Ոչ-կարներեւալ գիւղերով աշակերտաց համար պէժ է վճարել նաեւ իբրեւ պահեստի դրամ 3 Օսմ. Լիրա որ, իբրեւ աւանդ դրամ, կը պահուի Վարժարանիս դրամարկովին մէջ: Այս գումարէն վար կը դուրսի փոխարէն ա՛յն վնասներուն զորս աշակերտը կը պատճառէ չարաչար գործածելով Վարժարանիս գոյքերն ու կահ-կարասիները: Պահեստի դրամին ամբողջ կամ մնացորդը եւ կը տուի աշակերտին, երբ նա վերջնապէս մեկնի Վարժարանէս:

3<sup>0</sup>. Պատրաստական, Ա. եւ Բ. Դասարաններու աշակերտաց իւրաքանչիւրին համար պէժ է վճարել . . . . . կանխիկ 6 Լիրա Օսմ. իսկ Գ. Դ. Ե. եւ Զ. Դասարաններու աշակերտաց իւրաքանչիւրին համար . . . . . կանխիկ 7 Լիրա Օսմ. որ կը պարունակէ միայն ուսման եւ ցերեկուան ճաշի ծախսերը:

4<sup>0</sup>. Գաւառակի կամ Զուրթակի դասընթացին հետեւող աշակերտը պէժ է վճարել նոյնպէս . . . . . կանխիկ 3 Լիրա Օսմ. Գաւառակի հետեւողներն իրենք կը հայրապրեն նօրասէտ, եւլն. իսկ շուրթակահարները՝ շուրթակ եւ յարակից պիտոյք:

5<sup>0</sup>. Ամեն նորեկ աշակերտ Վարժարանս մտած աստե՛ն պէժ է որ Տեսչութեան ներկայացնէ իր բուսակի ընկալագիրը. հակառակ պարագային չընդունուիր: Իսկ արդէն Վարժարանիս մէջ գտնուողներէն անոնք որ մինչեւ յառաջիկայ Սեպտ. 15 անվճար բողուն իրենց բուսակները, եւ պիտի համբուին: Տարեբուսակները եւ այլ բոլոր տուրքերը կը վճարուին կամ կ’ուղարկուին Տեսչութեանս:

6<sup>0</sup>. Ոչ-կարներեւալ ծնողք կամ խնամակալք պարտաւոր են անպատճառ քաղաքիս մէջ ցոյց տալ պատուաւոր անձ մը՝ իբր իրենց փոխանորդ, որ գրաւորապէս յանձն պիտի առնէ, ի հարկին, վճարելու անվճար մնացած բուսակը՝ եւ իր տունն ընդունելու աշակերտը, երբ Վարժարանէս վերջնապէս իրեն յանձնուի:



7<sup>0</sup>. Երբ սարուան ընթացքին մեջ, առակերսր ո՛ր եւ է պատճառաւ բացակայի կամ ելնէ Վարժարանես, նոյն սարուան բռեակէն կամ միւս տուրքերէն բան մը չի գեղչուիր : Արձակման պարագային, Վարժարանս եւ կուսայ մնացորդ բռեակը՝ Վարժարանիս մեջ առակերսին անցուցած ժամանակին համեմատութեամբ :

8<sup>0</sup>. Ամառնային արձակուրդի միջոցին, օրափոխութեան կամ շրջագայութիւններու միջոցաւ, մասնաւոր խնամք կը սարուի առակերսներուն մարմնական կազդուրման՝ առանց միանգամայն զանց ընելու անոնց ուսումնական զբաղումները, որոնց համար առօրեայ մասնաւոր ժամեր կը սահմանուին : Վարժարանս վերոյիշեալ պայմաններով արձակուրդի տուրք չի պահանջեր :

Ամառնային արձակուրդի միջոցին, ծնողք կամ խնամակալք, երբ ուզեն, կրնան տուն սանիլ իրենց զաւակները կամ սաները, պայմանաւ որ երթելեկուրթեան ծախքը, ամեն հոգ ու պատասխանատուութիւն պատկանին իրենց կամ իրենց փոխանորդներուն :

9<sup>0</sup>. Նորեկ առակերսներու մուտքի քննութիւնները տեղի կունենան յառաջիկայ Օգոստոս 27-30 ին, իսկ վերամուտքի դասերը կ'սկսին Սեպտեմբեր 1 ին, ԲԵ. օր :

10<sup>0</sup>. Առակերս տալ փափաքող ծնողք կամ խնամակալք պարսին կանխաւ բանակցիլ Տեսչութեանս հետ :

Բ.— ԱՐՀԵՏՍԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺԻՆՆ ԱՌ ԱՅԺՄ ՈՒՆԻ ՄԻԱՅԻՆ ԿԱՀԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՆԻՒՂՐ՝ 4 ՏԱՐՈՒԱՆ ԸՆԹԱԳՈՎ :

Այդ նիւղին հետեւիլ կարենալու համար, առակերսը պէտք է որ.—

ա.) Ըլլայ 13-16 տարեկան, ուշիմ եւ առողջ :

բ.) Լրացուցած ըլլայ արդէն Վարժարանիս Բ. դասարանի ընթացքը եւ կամ Ազգ. Նախակրթարանի մը շրջանը :

Գիշերօթիկներու համար պէտք է վճարել մուտքի տուրք (միսնուագ) 3 Օ. Լ. եւ 12 Լիրա՝ տարեբռեակ, ամեն ծախք Վարժարանիս վրայ ըլլալու պայմանաւ : Արձակուրդի տուրքէ գերծ են գիշերօթիկները :

Իսկ ցերեկեաններու համար պէտք է վճարել . . . . . 3 Օսմ. Լիրա :

Ոչ-կարենբնակ գիշերօթիկները պահեստի դրամ՝ 3 ոսկի եւս վճարելու պարտաւոր են :

Ուսումնական բաժնի 5<sup>0</sup> — 10<sup>0</sup> պայմանները Արհեստանոցի առակերսաց եւս յատուկ են :

\* \* \* Վարժարանս ընդունուելիք ամեն աշակերտ պարսի ներկայացնելո ծննդեան եւ մկրտութեան վկայականը, իր յանձնարած վերջին վարժարանէն իրեն տրուած Ռանանց եւ Վարուց վերջին վիճակացոյցը, պատուաստի վկայականը եւ Օսմանիյէ ԹԷԶԷԻԲԷՆ :

Կարիւն, 11 Յունիս 1908.

ՓՈՒՍՎԵՐԱՏԵՍՈՒԶ ՍԱՆԱՍԱՐԵԱՆ ՎԱՐՎԱՐԱՆԻ

ԳԷՈՐԳ ԵՐԵՄԻԱՆ

ՏԵՍՉՈՒԹԵԱՆ ՀԱՍՅԷՆ Է

ارضرومده - اناساریان مکتبه


Տեսչութիւն Սանասարեան Վարժարանի

ԿԱՐԻՆ

Direction du Collège Sanassarian

(Turquie d'Asie)

ERZEROU





120

20694

2013

« Ազգային գրադարան »  
  
NL0055911



